

Կը փորձուիմ հարցնել թե՛ արդեօք իրապաշտ դպրոցը անբարոյական կիներ՞ր միայն ներկայացնելու համար կազմնած է:

Ուրկե՞ր կրցած է գտնել Զօհրապ այն պարկեշտ, ազնուասիրտ, ուղղամիտ, յաւիտենապէս իրենց իտէալին յարած տիպարները, որոնք արական սեռին կը պատկանին, եւ որոնք իր հերոսներու վսեմ պարը կը կազմեն:

*Պարահանդէսին վաղորդայնքին* բանաստեղծը, *Կատակին* դժբախտ գոհը, Միւսի Սէֆէրեանը, *Միւսին* հաւատարիմ սիրահարը, *Ֆուրթունան*, *Այինկաին* Սահակը, Յուսեփ աղան, *Տալիլաին* Տօթօթը.– բոլորն ալ ոսմանթիք տիպարներ, անստգիտ նկարագիրներ, բոլորն ալ հաւատարիմ իրենց սէրերուն, բոլորն ալ գոհերն են թեթեւաբարոյ, խաբեպատիր կանանց անսիրտ մեքենայութիւններուն:

Հապա *Ճիտին պարտքքին* Յուսեփ աղա՞ն, այն բարի, անձնագոհ հայրը. հապա *Ժամին բակըքին* տէրտէ՞րը որ իր սրտին ցաւէն կը մեռնի, անարժան մարդ մը եկեղեցիին մօտ թաղած ըլլալուն համար:

*Լուսահոգիին* ողորմելի խոստումներն անգամ գոնէ սիրոյ մէջ հաւատարիմ պահելու շնորհ կ'ընէ, ինչ որ կը զլանայ սիրուած, պաշտուած, երկրպագուած կիներո՞ն գորս իր անգուգական տաղանդը կը բանաստեղծացնէ, իրենց մոլութիւններէն իսկ առաւելութիւններ քաղելով իր նիւթին համար: Ո՛չ մէկը այդ կիներէն դատապարտուած, ո՛չ մէկը նախատուած է, հեղինակը ո՛չ մէկուն համար գործածած է անարգական բառ մը, որովհետեւ անոնք լեցուն իրաններ, հրդեհի նման բոցավառ կամ ածուխի կոտորուածքի պէս փայլուն մատեր եւ վրդովիչ, յիմարացնող նայուածքներ ունին: Աջք կը գոցէ անոնց ամէն հրէշութիւններուն, եւ անտարբեր կը մնայ, երբ իրենց պգտիկ ձինսթոյր թաթիկներուն մէջ կը ճմլեն կը բզկտեն զիրենք սիրող սիրտերը:

Արդէն գրագէտը՝ կնոջ ճակատագիրը, գրեթէ անոր նպատակը կը նկատէ իր խաբէութիւնը, կեղծիքը, անհաւատարմութիւնը, պչրանքը, այն ամէն զգուելի հանգամանքները, որոնք մարդը կը նուաստացնեն, եւ